«Էդիտ Պրինտ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կրթական գործընթացում ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները մոտակա պուրակում, զբոսայգում

Հաստատություն՝ Ամենագետներ նախակրթարան

Դաստիարակ՝ Հասմիկ Ղարիբյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ…….4

ՏՈՆԵՐ, ՋՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….5

Ազգային տոներն ու ծեսերը էկոլոգիական դաստիարկության գործընթացում…….....7

Փորձարարական հետազոտություն……...……..10

Եզրակացություններ……..16

Գրականության ցանկ…….....…..17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական մշակույթը երեխաների բարոյական, ճանաչողական և գեղագիտական զարգացման կարևորագույն միջոցներից մեկն է: Ժողովրդական մշակույթի զարմանալի ու խորհրդավոր երևույթները տոներն ու ծեսերն են: Դրանց նովանդակությունը արտացոլում է ժողովրդի կյանքը, մարդկային փոիձը, մարդու հոգևոր աշխարհը, նրա մտքերը, զգացմունքները, փորձառությունները: Ժամանակակից երեխան ապրում է այն ժամանակաշրջանում, երբ մշակույթն ու մայրենի լեզուն ենթարկվում են օտար մշակուբթների ազդեցությանը: Հեռուստացույցի էկրաններին երեխան տեսնում է Դիսնեյի մուլտհերոսներ, արտասահմանյան ֆիլմերի հերոսներ, որոնք դառնում են ժամանակակից երեխաների սիրելին: Այս հանգամանքով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը: Նախադպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացում պետք է կիրառվեն երեխաների բնապահպանական փորձի կազմակերպման, օրինակների օգտագործման, բնապահպանական պրակտիկ գործողություններին ընտելացման, դրանց կազմակերպման եւ գնահատման, համոզման, բնության նկատմամբ դրական հուզական զգացմունքներ առաջացնող տարբեր մեթոդներ: Նախադպրոցականների բնաճանաչողական ընդունակությունների զարգացման միջոց են ազգային տոները՝ Վարդավառը, Ջանգյուլումը, Ծառզարդարը եւ այլ տոներ:

Աշխատանքի նպատակն է՝Կրթական գործընթացում ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների բացահայտումն է:

Աշխատանքի նպատակից բխող խնդիրներն են՝

- Ուսումնասիրել ազգային տոների ու ծեսերի առանձնահատկությունները նախադպրոցական ուսումնական հաստատություններում
- Դիտարկել ազգային տոներն ու ծեսերը էկոլոգիական դաստիարկության
- գործընթացում
- Անցկացնել փորձարարական հետազոտոիթյուն դաստիարակների շրջանում, նախադպրոցական ուսումնական հաստատություններում ազգային տոների և ծեսերի կարևորորության բացահայտման նպատակով:

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել: Կազմակերպման այս ձևը ստեղծականության և ինքնադրսևորման լայն հնարավորություն է տալիս: («Ծեսը՝ ինքնագիտակցության միջոց» , «Ազգային ծեսերին, խաղերին, երգերին՝ նոր կյանք»): Սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային, ծիսական խաղեր: Նախակրթարանում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը,
- հիշողությունը,
- երևակայությունը,
- ստեղծագործելու կարողությունը,
- հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը,
- շարժողականությունը,
- ակտիվությունը,
- վարքի կամածինությունը,

 ընկալումը,

 շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու

կարողությունը,

 երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը,

 ճիշտ կողմնորոշվելու կարողությունը,

 շարժումներին տիրապետելու կարողությունը,

 լսելու կարողությունը,

 դիտելու և կրկնելու կարողությունը,

 ինքնատիրապետումը,

 ինքնուրույն աշխատելու կարողությունը,

 վերլուծելու, համադրելու կարողությունը,

 հարստացնում է բառապաշարը:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գոծունեության տարբեր ձևերը:

Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են.

 իրավիճակների խաղարկում

 դերախաղ

 խմբային աշխատանք

Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում: Եթե կան ընկույզներ, ուրեմն կարելի է խաղալ ընկույզով խաղեր, տիկնիկներով խաղալու համար պարտադիր չէ սպասել Բարեկենդանին, եթե հարկավոր է «չքացնել, աղալ» ամեն վատը և խանգարողը, պարտադիր չէ սպասել Զատկի Ավագ շաբաթվա չորեքշաբթի օրվան: Ավելին, եթե աշխատելիս կարիք կա սանի կամ սաների ուշադրությունը գրավել, կարելի է «չքացնել, աղալ» նրա (նրանց) անուշադրությունը, ցրվածությունը: Տվյալ դեպքում ծիսական խաղը, բացի հիմնովին յուրացնելուց, երկու կողմերի համար դառնում է հետաքրքիր ու անմիջական շփման միջոց՝ ներառելով իր մեջ, բացի իմացականից, նաև՝ հումոր:

Մանկական ազգային, ծիսական խաղերը մանուկների համար շատ կարևոր ու պահանջարկ ունեցող նյութեր են: Պահանջատեր կարող են լինել նախակրթարանի

սաների, Կրտսեր դպրոցի սովորողների ծնողները, դաստիարակները, դասվարները, այլ շահագրգռված անձինք: Լավ կլիներ, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ծիսական փորձը փոխանցվեր Հայաստանում գործող մանկական հաստատություններում աշխատող բոլոր աշխատողներին, ծնողներին: Քանի որ այս ամենը մեր կյանքի կարևոր բաղադրիչները դարձնելով միայն կարող ենք մեր ազգային ժառանգությունը, փոխանցել սերունդներին:

ՏՈՆԵՐ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքում ծրագրում իրենց ուրույն տեղն են գրավում զանազան գրավիչ ժամանցները, մարզական զվարճություններն ու տոնահանդեսները: Ծրագիրը նախատեսում է դաստիարակել մարդասիրական վերաբեմունք, զարգացնել սեր դեպի բնությունը, բարոյական պատկերացումներ բնության, կարեկցուքի, հոգատարության, անկեղծության մասին, մերժողական վերաբերմունք ժլատության, անտարբերության, անազնվության, դաժանության նկատմամբ: Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, ինտերնացիոնալ զգացմունքների հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Այստեղ երեխայի դաստիարակության հիմնական ուղին երեխայի շարժումն է դեպի ընդհանուր մարդասիրական արժեքներ, որոնք բացահայտվում են ազգային մշակույթի՝ պարերի, երգերի, առածների ասացվածքների հետ երեխայի հաղորդակցման միջոցով: Արվեստի աշխարհը երեխայի կյանքին պետք է կապվի իր ամբողջ բազմազանություններով, հարստությամբ՝ 5-6 տարեկան երեխայի վրա ունեցած ներգործման մեծ ուժով: Բարոյական դաստիարակությունը այս տարիքում հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում, քանի որ երեխայի ամենօրյա զբաղմունքը, ներառյալ նրա գործունեության ձևերը, հնարավոր են դարձնում շրջապատող իրականության նկատմամբ.դրսևորել անմիջական վերաբերմունք, օգնում են դաստիարակել բարոյականայի.հատկանիշներ:Սանկապարտեզում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային տոներին նվիրված ցերեկույթ, մարզական խաղ ու զվարճության իր ուրույն

հետքն է թողնում երեխայի հիշողության ու երևակայության վրա, նպաստում անձի ձևավորմանը: Մանկապարտեզում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային և եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված խաղ ու զվարճություն խոր հետք է թողնում երեխայի հիշողության, երևակայության վրա: 5-6 տարեկան երեխայի կյանքում մեծ իրադարձություն է դպրոց ընդունվելը, որին նվիր վում է հա տուկ ցե րե կույթ (հանդես): Այդ հանդեսին (ցերեկույթին) երեխաները պատրաստումա են ի րենց նկար չա կան աշխատանքների ցուցահանդեսները: Ստորև ներկայացվող տոները, նշանավոր տարեթվերը, ավանդական միջոցառումները

նպատակ ունեն հուշելու դաստիարակներին, թե ինչպես պետք է նախապատրաստվել առաջիկա տոնահանդեսին: Բացի նշված օրերից, յուրաքանչյուր մանկապարտեզ կարող է ունենալ իր ավանդական տոնական օրը, հովանավորողներիհետ հանդիպման ցերեկույթները, տարեվերջյան ցուցահանդեսները, հաշվետու հանդեսները և այլն: Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ երանգն ու գրավչությունը: Ուստի դաստիարակները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն, հաշվի առնեն տեղական պայմանները, եղած հմարավորությունները: Արձագանքել ժողովրդական եկեղեցական տոներին (Վարդավառ, Համբարձման տոն, Տեառն ընդառաջ) համագործակցելով ընտանիքի հետ: Նշել երեխաների ծննդյան տարեդարձը, որը մանկական կոլեկտիվի համերաշխության, հարգանքի և մեծարման իսկական արարողություն է: Տարվա ընթացքում պարբերաբար անցկացվող միջոցառումներից են՝ մարզական տոները, մրցույթները, զվարճությունները՝ 1-1,5 ժամ տևողությամբ:

Պետք է կազմակերպել կարճատև արշավներ, զբոսանքներ ձմռանը, «Առողջության շաբաթներ», «Վազորդի օր»: Հնարավորության դեպքում կազմակերպել դահուկներով կամ սահնակներով մրցույթ և այլն: Նման միջոցառումները պետք է ուղեկցվեն երաժշտությամբ, համապատասխան կահավորմամբ և զարդարանքներով: Երեխաների կյանքում մեծ իրադարձություն են ինքնագործունեության համերգները,տիկնիկային և ստվերային թատրոնները, կինոֆիլմերի և դիաֆիլմերի դիտումները՝ համառոտ և մատչելի բացատրություններով:

.Ազգային տոներն ու ծեսերը էկոլոգիական դաստիարկության գործընթացում

Նախադպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացում պետք է կիրառվեն երեխաների բնապահպանական փորձի կազմակերպման, օրինակների օգտագործման, բնապահպանական պրակտիկ գործողություններին ընտելացման, դրանց կազմակերպման եւ գնահատման, համոզման, բնության նկատմամբ դրական հուզական զգացմունքներ առաջացնող տարբեր մեթոդներ: Կրթադաստիարակչական գործընթացում երեխաների ուշադրությունը հրավիրվում է մեծահասակների՝ բնության մեջ աշխատելու օրինակների վրա՝ ծառ տնկել, ծաղիկ աճեցնել, կենդանիներ խնամել եւ այլն:Կյանքի եւ գործունեության ընթացքում ձեւավորվում են երեխաների փոխհարաբերություններն իրենց հասակակիցների, մեծահասակների եւ շրջակա միջավայրի օբյեկտների հետ, գոյանում է միմյանց եւ բնության հետ փոխադարձ կապերի, շփման եւ միջավայրում իրեն բարեկիրթ դրսեւորելու վարքի փորձ: Հատկապես մեծ է երեխաների՝ բնության մեջ, բնության օբյեկտների հետ աշխատելու գործողություններին գնահատական տալու նշանակությունը: Նախադպրոցականների

բնաճանաչողական ընդունակությունների զարգացման միջոց են ազգային տոները՝ Վարդավառը, Զանգյուլումը, Ծառզարդարը եւ այլ տոներ:

ԶԱՏԻԿ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Որոշ ուսումնասիրողներ այն նմանեցնում են հրեաների Պասեքի հետ (Պասեքը, որ նշանակում է ելք, հրեաների ամենասիրված տոնն է և խորհրդանշում է Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր նրանց ելքը): Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և, ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն: Զատկական ձուն «օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ մեջը» (Թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին. «Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և, ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի Արյամբ: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»: Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի,

կյանքի խորհրդանիշ: Ստ. Մալխասյանցը նշում է, որ «ծառ» նշանակում է նաև «ձվի սուր ծայրերը»: Այս բացատրությունը, որ ցույց է տալիս ձվի և կենաց ծառի գաղափարական առնչությունները, վկայում է, որ զատկական ձուն իր մեջ պարունակում է կյանքի հավերժության խորհուրդը

Համբարձման տոն

Եթե Զատկի տոնին առանձնանանում , զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և երգ-պարով, ուրախություններով սիրաշահում Մայր բնությանը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում: Տոնին նախորդող չորեքշաբթի օրը կանայք «Ծազկամոր կիրակի» էին պահում՝ խուսափում էին որոշ աշխատանքներից ի պատիվ «Ծաղկամոր», որպեսզի նա իրենց երեխաներին զերծ պահեր «ծաղիկ» և «կարմրուկ» հիվանդություններից: Այդ նույն օրը, վաղ առավոտյան սկսվում է հիմնական ծեսի՝ վիճակի նախապատրաստությունը, որի պատճառով էլ հաճախ տոնը կոչվում էր «Վիճակ»: Աղջիկների նախապես ընտրված խմբերը՝ յոթական հոգի, դուրս էին գալիս ծաղիկ հավաքելու: Ծաղիկներից բացի նրանք փարչի մեջ հավաքում էին յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակ ծառից յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակ քար: Փարչի մեջ գցվող ծաղիկներից բացիբազմաթիվ ծաղիկներ էին քաղում՝ զարդարվելու և Համբարձման ծաղկեփնջեր պատրաստելու համար: Ծաղիկների մեջ գերիշխում էին դեղին գինարբուկը (հորոտ-մորոտ), ճերմակ ու վարդագույն սիրի-սիրին, կարմիր ու ոսկեգույն կուժկոտրուկները, բոսորագույն աղբրաց արունը, ալ վարդակակաչը: Ընդհանրապես, աղջիկները դուրս էին գալիս բոլորից գաղտնի և, մինչև իրենց առաքելությունը չկատարեին, անխոս ու լուռ էին մնում:

ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐԹԻՎԵՐ, ՎԱՐԹԵՎՈՐ, ՎԱՐԴԵՎՈՐ

Ամեն տարի շքեղ հանդիսությամբ, տոնական շարականներով ու աղոթքներով, Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ: Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով «վարդավառ» բառը կազմված է վարդ(ուարդ) – ջուր և վառ – սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը: Որոշ հեղինակների կարծիքով էլ այն նշանակում է «կրակավառ», «հրավառ»: Եվ, իրոք, հուլիսին, այսինքն հրոտից ամսին, երբ արևը

հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածաբար ջրցանություն են կատարում և աստվածներից ջուր խնդրում: Վաղ ժամանակներում հայերը, շատ ազգերի նման, բնության ուժերին վերագրում էին գերբնական հատկություն և ուժ: Առանձնապես մեծ պաշտամունքի էին արժանացել ջուրն ու կրակը, որոնք կենսական նշանակություն ունեին մարդկանց համար: Կրակապաշտության հետքերը տեսանք Տյառնընդառաջին, իսկ ջրի պաշտամունքը ցայտուն երևում է Վարդավառի տոնի մեջ: Ըստ ավանդության, երբ Նոյ նահապետը դուրս եկավ տապանից, առաջին ամիսը կոչեց Նավասարդ (նորոգված աշխարհ): Ջրհեղեղից ազատվելու հիշատակը անմոռաց դարձնելու նպատակով Նոյն առաջարկեց իր տղաներին ջուր լցնել իր վրա: Ահա ջրի այդ պաշտամունքն է, որ առաջին հերթին աչքի է ընկնում Վարդավառին: Վարդավառը մեր նախնիների համար եղել է ջրի, բերք ու բարիքի, բնության պաշտամունքի եւ գեղեցկության գովերգման տոն: Տոնակատարությունը հարմար է նշել բացօթյա՝ մոտակա բացատում, դաշտում, մանկապարտեզի բակում, որպեսզի երեխաները հաղորդկացվեն բնությանը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով խնդիրը իրականացվել է փորձարարական հետազոտություն մանկապարտեզի դաստիարակների շրջանում: Հետազոտության մասնակցել են թվով 10 դաստիարակ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ դաստիարակների իրազեկվածության մակարդակի բացահայտումը: Հետազոտական աշխատանքի համար կազմվել է հարցաթերթիկ և տրվել դաստիարակներին: Ստորև ներկայացված է հետազոտության վերլուծության արդյունքները գրաֆիկների տեսքով:

Ինչպիսին է երեխաների ներգրավվածությունը ազգային միջոցառումներին:

Copy

12 responses



Նշեք ազգային տոներ,որոնք կարևորում և տոնում եք այն հաստատությունում,որտեղ աշխատում եք

Copy

12 responses



Ինչպիսի ազդեցություն ունի դրանց կիրառումը երեխայի զարգացման վրա

Copy

12 responses



Կարևորում եք բնության գրկում կազմակերպվող բնապահպանական և ազգային միջոցառումները

Copy

12 responses



Կարևորում եք ազգային տոնների, ծեսերի կազմակերպումը մանկապարտեզներում:

Copy

12 responses



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով թեմայի վերաբերյալ տեսական գրականություն և կատարելով փորձարարական հետազոտություն երել ենք հետևյալ եզրահանգումներին՝

- Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, ինտերնացիոնալ զգացմունքների հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Այստեղ երեխայի դաստիարակության հիմնական ուղին երեխայի շարժումն է դեպի ընդհանուր մարդասիրական արժեքներ, որոնք բացահայտվում են ազգային մշակույթի' պարերի, երգերի, առածների ասացվածքների հետ երեխայի հաղորդակցման միջոցով: Ժողովրդական մշակույթը երեխաների բարոյական, ճանաչողական և գեղագիտական զարգացման կարևորագույն միջոցներից մեկն է: Ժողովրդական մշակույթի զարմանալի ու խորհրդավոր երևույթները տոներն ու ծեսերն են:
- Նախադպրոցականների էկոլոգիական կրթության ու դաստիարակության գործընթացը նպաստում է երեխայի մեջ բնության գեղեցկության, նրանց հույզերի, ըմբռնումների, զգացմունքների եւ պատկերացումների զարգացմանը: Այսինքն՝երեխայի բնապահպանական, բարոյական եւ գեղագիտական զգացմունքներըսերտորեն կապված են միմյանց: Բնությունը երեխայի գեղագիտականդաստիարակության ամենահզոր միջոցն է, որի գեղեցկությունը խորությամբ ընկալվում է դեռեւս դեռեւս մանկական տարիներին եւ դրոշմվելով երեխայի հոգու, հիշողության մեջ՝ պահպանվում է մարդու ողջ կյանքի ընթացքում: Եթե դաստիարակը երեխային սովորեցնում է տեսնել,նկարել բնության երեւույթները, գեղեցկությունը, վերարտադրել զգացածը, ապա բնության անկրկնելի ձևերն ու գույները փոքրիկի մեջ առաջացնում են գեղագիտական ապրումներ: Էկոլոգիական դաստիարակության լավագույն միջոցներ են մանկապարտեզում
կազմակերպվող բնապահպանական տոները, միջոցառումները ,հանդեսները, զվարճանքները :
- Իրականացնոլով փորձարարական հետազոտություն և վերլուծելով արդյունքները պարզ դարձավ, որ այժմյան դաստիարակների գերակշռող մեծամասնությունը հացվածների մեջ կարևորում են ուսուցման արդյունավետ իրականացման համար կազմակերպվող ազգային միջոցառումների և տոնակատարությունների դերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 1. Ասատրյան Լ. Թ. Սարգսյան Փ.Ա. «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան 2002.

2. Մարտիրոսյան Գ. «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում» , Երևան 2007.

3. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան « Նախադպրոցական մանկավարժություն» ,Երևան 2005

4. «Հայկական սովորություններ» Քաջբերունի 1903թ.

5. «Պատկերազարդ տոնացույց» Մ. Ղազարյան, Ա. Համբարձումյան

6. «Ազգային տոներ» Ա. Սարգսյան

7. https://deti-club.ru/ehkologicheskie-prazdniki-v-detskom-sadu

8. https://www.maam.ru/detskijsad/mesto-i-znachenie-prazdnikov-i-razvlechenii-v-yekologicheskom-vospitani-starshih-doshkolnikov.html

9. https://hovanimskham.files.wordpress.com/2018/06/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680-d5b6d5afd5a1d680d5a1d5a3d680d5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6.pdf

10. https://www.un.org/en/observances/world-soil-day

11. https://portal2011.com/category/vospitatelyam/prazdniki-razvlecheniya-scenarii/ekologicheskie/

12. https://ncdc.am/

PLAY
AND
WIN